ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՄՐՑՈՒՅԹԻ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22-ը մայիս 2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ Ավիացիայի վարչության ԱՏՈՒ և ավիացիոն սպառազինության ծառայության պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի գլխավոր Լ. Թունյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:
Բացակայում է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան:

Քննարկելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և հաշվի առնելով ներկայացված տեխնիկական բնութագրերի առանձնահատկությունները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մանրամասն ուսումնասիրել դրանք և հաջորդ նիստը հրավիրել 06.06.2018թ., ժամը 10:00-ին:

06.06.2018թ., ժամը 10:00-ին հանձնաժողովը հրավիրված նիստում շարունակեց աշխատանքները:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ. Բաղդասարյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Տ. Բաղդասարյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը «Էյչ Գրուպ» ՍՊԸ և «Սպեցմաշ» ՍՊԸ-ների հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություն մասնավորապես՝.

-«Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերի հավելված 6.1-ի տեսքով ներկայացված՝ 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա է «կամ համարժեք» արտահայտությունը, ուստի տարակերպ մեկնաբանություններից խուսափելու համար անհրաժեշտ է բացառել նշված արտահայտությունը և սահմանել հստակ տեխնիկական բնութագիր,

«Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորելու նպատակով ներկայացված նախկինում կատարված պայմանագրով նախատեսված ապրանքները չեն դասվում ընթացակարգի հրավերով տվյալ չափաբաժնի մասով որպես նմանատիպ սահմանված (լուսանկարչական թիթեղների կամ ժապավենների, լուսանկարչական պարագաների) ապրանքների շարքին (պայմանագրերը նմանատիպ չեն):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Մաժէվ» ՍՊԸ ին շտկելու փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

11.06.2018թ., ժամը 10:30-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը քննարկեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 07.06.18թ. որպես շտկում ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ ընկերությունը շտկել է հավելված 6.1 առկա անհամապատասխանությունը: Հանձնաժողովն արձանագրեց նաև, որ մասնակցի կողմից մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորող այլ պայմանագիր չի ներկայացվել, այլ ներկայացվել է պարզաբանում՝ գրության տեսքով/կցվում է/:
20.06.2018թ., ժամը 10:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը և պատասխանատու ստորաբաժանման կողմից հանձնաժողովին ուղղված դիրքորոշումը պայմանագրում ներառված ապրանքատեսակների նմանատիպության վերաբերյալ՝ որոշեց, որ «Մաժէվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրի միայն 5-րդ և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները կարող են դիտվել որպես նմանատիպ /տեսախցիկ IP ստացիոնար Planet ICA-3550V և տեսախցիկ IP ստացիոնար Planet ICA-HM620/, որոնց ընդհանուր գումարը սակայն պակաս է ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից և հաշվի առնելով նշված հանգամանքը, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և առաջարկել մասնակցին՝ շտկելու առկա անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

26.06.18թ., ժամը 10:30-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, քննարկելով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված շտկմանն իպատասխան 21.06.18թ. ներկայացված գրությունը (կցվում է), արձանագրեց, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել առկա անհամապատասխանությունը և չի ներկայացվել հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթեր: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժել «Մաժէվ» ՍՊԸ-ի հայտը և տվյալ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «Սիգռամ» ՍՊԸ -ին:

Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 23/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Զեկուցում՝

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Տ. Մաթևոսյան

Գնահատող Ա. Համբարյան

Գնահատող Լ. Թունյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումները համակարգող՝ Տ. Բաղդասարյան

26.06.2018թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՄՐՑՈՒՅԹԻ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 31-ը հուլիսի 2018թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ Ավիացիայի վարչության ԱՏՈՒ և ավիացիոն սպառազինության ծառայության պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի գլխավոր Լ. Թունյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:
Բացակայում է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյանը

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ.Բաղդասարյան)

1. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/86 որոշումը քննարկելու մասին:
2. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/86 որոշումը քննարկելու մասին

(Գ. Տերյան)

1. «Մաժէվ» ՍՊԸ 03.07.2018թ. բողոքարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 22.05.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշումը «Մաժէվ» ՍՊԸ-ն հայտը «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով մերժելու որոշումը, որը 25.07.2018թ. հրապարակված ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 23.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/86 որոշմամբ բավարարվել է: ՈՒստի գնահատող հանձնաժողովը «Մաժէվ» ՍՊԸ հայտը համարել է համապատասխան հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Մասնակցի՝ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Տերյան)

1.1 ***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 31.07.2018թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ և վերջիններիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Գնահատող Տ. Մաթևոսյան

Գնահատող Ա. Համբարյան

Գնահատող Լ. Թոնյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումները համակարգող՝ Տ. Բաղդասարյան